

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՐՈՒԹՅԱՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱԿՈՒ ՊԱՐՈՆՅԱՆԻ «ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՄՆԵՐԸ»
ՆՈՎԵԼԱՇԱՐԻ ԱՆԳԼԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i64.90

ԱՄՓՈՓՈՒՄ

Հանճարեղ երգիծաբան Հակոբ Պարոնյանի (1843-1891) ստեղծագործության որոշ գլուխգործոցներ վաղուց թարգմանվել են տարբեր լեզուներով և նրա անունը ճանաչելի դարձրել շատ երկրներում: Անգամ հեռավոր մայրցամաքից են լսվել դրվատալից խոսքեր՝ անչափ կարևոր փոքր ժողովրդի մեծ մշակույթի համար: Այսպես, օրինակ, Բոստոնում անգլերենով հրատարակված «Պաղտասար աղբար»-ի առաջաբանում խոսելով հայ գրողի երգիծանքի ուժի և ազդեցության մասին՝ ամերիկացի արվեստագետ Ալբերտ Լանգն ընդհանրացրել է. «Հակոբ Պարոնյանի հումորը և սատիրան բոլոր երկրներինն է ու ժողովուրդներինը» (**Baronian H., 1933**): Նույն արձագանքն է լսվել նաև Եվրոպայից: «Հակոբ Պարոնյանի երգիծանքը չափազանց կենսունակ է,- նշել է Ֆրեդերիկ Ֆեյդիտ.- նրա կերպարները, բնականաբար, կրելով ժամանակի և տեղի շունչը, միաժամանակ համամարդկային են» (**Feydit F., 1961**):

Հիրավի, արվեստի մեծագույն երկերն անմահ են, իսկ հանճարը, ինչպես իրավացիորեն նկատել է Պարոնյանը, չի ճանաչում ազգային ու կրոնական սահմաններ. «Հանճարի ծնունդ եղող բանաստեղծություն մը լավ ընդունելություն կը գտնե Անգղիայեն, որչափ ալ անոր հեղինակն սլավ ըլլա» (**Պարոնյան Հ., 1964, հ.2**): Իսկ հանճարի անունը հայրենիքից դուրս լսելի դարձնելու համար առաջին հերթին կարևորվում է *հաջողված* թարգմանության դերը:

Եվ ահա սույն հոդվածը նվիրված է Պարոնյանի բազմաբնույթ ու բազմաժանր ստեղծագործության մի ինքնատիպ մասը կազմող «Քաղաքավարության վնաս-

ներք» նովելաշարի (1886-1887) անգլերեն թարգմանության (Baronian H., 1983) ուսումնասիրությանը: Այն կատարել է *Ջեք (Արտավազդ) Անդրեասյանը* (1920-2009):

Հայերենից անգլերեն թարգմանված տեքստերի համեմատության ընթացքում, ցավոք, ակնառու են բազմաթիվ բացթողումներ, տեքստային անհամապատասխանություններ, անգամ քմահաճ, սխալ և անհասկանալի փոխանցումներ: Մի խոսքով, արդեն տասնամյակներ մեր առջև է, մեղմ ասած, ոչ այնքան հաջողված թարգմանություն: Ի տարբերություն Պարոնյանի մյուս գործերի՝ Երվանդ Մկրտչյանի կողմից կատարված լրջմիտ թարգմանությունների («Պաղտասար աղբար» (Baronian H., 1933), «Մեծապատիվ մուրացկանները») (Baronian H., 1930)՝ այս դեպքում անգլախոս ընթերցողի համար չեն ապահովվել հայ գրողի երգիծանքի ազդեցիկ ուժի և բարձր արվեստի զգացողությունը: Հոդվածագիրն ըստ հարկի առաջարկում է սեփական թարգմանությունները՝ նկատի ունենալով բնագրի համապատասխան հատվածների անգլերեն համարժեքների ոչ միայն բացակայությունները, այլև դրանց պարզապես անհասկանալի անտեսումները:

Բանալի բառեր և արտահայտություններ. Հակոբ Պարոնյան, «*Քաղաքավարության վնասները*», նովելաշար, անգլերեն թարգմանություն, *Ջեք Անդրեասյան, համարժեքություն, բնագիր - թիրախ տեքստեր, փոխանցում, զուգադիր քննություն, երգիծանք:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ թարգմանաբանությունն արվեստի այն տեսակներից է, որն ունակ է փոխանցելու տարբեր ժողովուրդների մշակութային արժեքներն ու լեզվամտածողությունը: Դարերի խորքից եկող և այսօր էլ չափազանց կենսունակ այդ ոլորտը միշտ եղել է գրականության տեսաբանների ուշադրության կենտրոնում: Այսպես, նորվեգացի գիտնական Սիրի Ներգարդն ու իտալացի լեզվաբան, նշանագիտության ոլորտի թարգմանիչ Ստեֆանո Արդուինին, հանդես գալով «Թարգմանությունն իբրև նոր հարացույց» խորագրով համատեղ հոդվածով, իրավացիորեն շեշտադրում են, որ «արդի միջմշակութային աշխարհում թարգմանությունը դարձել է բեղմնավոր ու հաճախադեպ փոխաբերություն:

Պատմական հպանցիկ հայացքն անգամ վկայում է գեղարվեստական թարգմանության կարևորությունն ու առանձնահատուկ նշանակությունը: Հայտնի է, որ հայ մշակութային կյանքում թարգմանությունը՝ իբրև կարևորագույն խնդիր, աներկբայորեն կապված է Մեսրոպ Մաշտոցի և նրա սաների անունների հետ: Իսկ քիչ անց այն պիտի վերածվեր թարգմանչաց մի ամբողջ շարժման: Ռուսաստանում, սակայն, գրական թարգմանության ակունքները տանում են դեպի 20-րդ դարակիզը, երբ հանրաճանաչ գրող Մաքսիմ Գորկին հիմնում է «Всемирная литература» հրատարակչությունը (1919) և առաջինը թողարկում «Գեղարվեստական թարգմանության սկզբունքները» խորագիրը կրող գրքույկը, ուր ներառված էին իր, Կոռնեյ Չուկովսկու և Նիկոլայ Գումիլյովի հոդվածները: Պետք է նկատել, որ եթե հայ իրականության մեջ դեռ վաղուց կատարվում էին թարգմանություններ հունարենից և ասորերենից, որոնց նպատակը, անշուշտ, ուրիշ ազգերի գրականությանը հաղորդակից լինելն էր, ապա ռուս գրողներին ավելի շատ հետաքրքրում էին թարգմանության հանդեպ ստեղծագործական և գիտական մոտեցումները: Բոլորովին այլ էր իրականությունն Արևմուտքում. Էլիզաբեթյան դարաշրջանում (1558-1603) թարգմանությունները կատարվում էին հիմնականում անտիկ՝ հունահռոմեական գրականությունից, և թարգմանիչներն իրենց ուշադրությունը կենտրոնացնում էին անգլերենի բառապաշարի հարստացման ու միջդասակարգային հարաբերությունների պատկերման վրա: Ուշագրավ է, որ արդեն 18-րդ դարում բնագրային այն հատվածները, որոնք անհասկանալի էին կամ կարող էին ձանձրա-

լի թվալ ընթերցողին, հարմարեցվում էին՝ ըստ թարգմանչի հայեցողության: Հետագայում տիրապետող է դառնում անգլիացի թարգմանիչ Ջոն Մայքլ Քոհենի տեսակետը, որի համաձայն՝ էական է միայն ու միայն տեքստը: 20-րդ դարում գերակշռող է դառնում թարգմանության փիլիսոփայական տեսությունը, երբ թարգմանվում էին հիմնականում հայտնի փիլիսոփաների գործերը, և ուշադրության կենտրոնում էր նյութի ճշգրտությունը, բայց ոչ ոճը: Ներկայումս ևս տեսաբանները մշտապես շեշտադրում են գրական երկերի թարգմանության խնդիրը և փորձում են հնարավորինս դասակարգել թարգմանիչների առջև ծառացած մարտահրավերները, որոնցից առաջնայինը, հարկավ, հավատարիմ և համարժեք թարգմանությունն է: Առաջին հայացքից այս երկու եզրույթները թվում են նույնը, սակայն «հավատարիմ» ասելով՝ հասկանում ենք միայն բառերի և բովանդակության փոխանցում, մինչդեռ երկրորդը ներառում է բնագրային ու թիրախային տեքստերի բոլոր տարրերը:

Արդի թարգմանության տեսության բնագավառում մեծ տեղ է զբաղեցնում թարգմանված տեքստի համարժեքության հիմնախնդիրը, որը ներառում է լեզվառճական և թեմատիկ տարրերը: Այս դիտանկյան ակունքները տանում են դեպի չեխ գիտնական Փիթեր Նյումարքի հայտնի կարծիքը, այն է՝ «համարժեքությունը ցանկալի արդյունք է և ոչ թե թարգմանության նպատակ» (**Newmark P., 1988**): Իսկ ամերիկացի լեզվաբան Նոամ Չոմսկին (նա հայտնի է իբրև «ժամանակակից լեզվաբանության հայր») իր աշխատություններից մեկում գրում է. «Անհրաժեշտ է տարբերակել խոսող-ունկնդիր լեզվիմացությունն ու կատարողականությունը ներառող համարժեքությունը, որը վերաբերում է հստակ իրավիճակներում լեզվի օգտագործմանը» (**Chomsky N., 1965**): Հետագայում այս նշանավոր գիտնականն ավելի լայնորեն է անդրադարձել նույն խնդրին և շեշտադրել, որ յուրաքանչյուր թարգմանչի գերխնդիրն է երկու լեզուների խիստ տարբերակումն ու միաժամանակյա դիտարկումը, այսինքն՝ թարգմանիչը պարտավոր է համապատասխանեցնել բնագրային ու թիրախային լեզուները: Մինչդեռ անգլիացի լեզվաբան և թարգմանության տեսաբան Ջերեմի Մունդելը կարծում է, որ «համարժեքության հայեցակարգն ամենավիճահարույց հարցերից է,

ուր գիտնականները համաձայն չեն դրա վավերականությանը և օգտակարությանը» (Munday J., 2008): Կարծում ենք՝ ամփոփելով հանդերձ թարգմանված տեքստի համարժեքության վերաբերյալ զանազան մոտեցումները՝ կարելի է այդ ամենը ներկայացնել ավստրիալիացի գիտնական և տեսաբան Էնթոնի Փիմի հետևյալ սպառնալիքային բնութագրումով. «Համարժեքության խզման դեպքում թարգմանությունը վտանգվում է. այն կարող է դառնալ *հարբած նավակ*» (Pym A., 2014):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ելնելով սույն հոդվածի խնդրո առարկայից, այն է՝ բնագրից թիրախային լեզվի թարգմանաբանական զուգադիր քննությունը, ընտրվել է *տիպաբանական-համադրական մեթոդը*¹ իբրև այս ուսումնասիրության ամենահարմար եղանակ:

ՔՆՆԱԴՐՈՒՄ

Այժմ կոնկրետ օրինակներով անցնենք Հակոբ Պարոնյանի «Քաղաքավարության վնասները» նորավեպերի շարքի (բնագիր) (Պարոնյան Հ., 1964, հ. 3) և դրա անգլերեն թարգմանության (թիրախ տեքստ) (Baronian H., 1983) զուգադիր քննությանը:

Աշխարհում կատարյալը, ըստ Պարոնյանի, բնությունն է. պետք է սովորել նրանից ու նրա հետ ապրել միաձույլ, իսկ բնականից հեռացած ցանկացած երևույթ վերածվում է ներդաշնության աղավաղման և բերում վնասներ: Հիմնականում այս խնդիրն է արծարծված «Քաղաքավարության վնասներ»-ի մեջ: Գրողն իրեն հատուկ սրամտությամբ ու նուրբ հեգնանքով ծաղրում է պոլսահայ քաղքենի ընտանիքներում համաճարակի պես տարածվող մոդայամուլությունն ու պճնասիրությունը, քաղաքավարության քողով պարուրված արատավոր երևույթները: Հեղինակի կարծիքով՝ քաղաքավարությունը միջանձնային հարաբերությունների անհրաժեշտ բաղադրիչներից է, բայց երբ այն դառնում է կեղծելու, խաբելու կամ երկերեսանիության գործիք, արդեն բերում է բարոյահոգեբանական ցավալի վնասներ:

Այստեղ ծնվում է ամենակարևոր հարցը՝ արդյոք թարգմանչին հաջողվե՞լ է հավատարիմ մնալ բնագրին, և որքանո՞վ է նա կարողացել անգլախոս ընթերցողին

փոխանցել պարոնյանական երգիծանքի համն ու հոտը: Նախ նկատենք, որ թարգմանիչ Ջեք Անդրեասյանը պատահական մեկը չէ. նա սփյուռքահայ շնորհալի գրագետներից էր, որը, ի դեպ, հայտնի է որպես “The Armenian Mirror-Spectator” շաբաթաթերթի և “Ararat” եռամսյա ամսագրի խմբագիր: Գրական այս ակնառու գործիչը, ի թիվս այլ երկերի, հաջողությամբ անգլերեն է թարգմանել Գրիգոր Զոհրապի «Խղճմտանքի ձայներ»-ը, Երվանդ Օտյանի «Ընկեր Բ Փանջունի»-ն և նույն Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»: Նրա գրիչը, սակայն, փոքր-ինչ ժլատ է գտնվել «Քաղաքավարության վնասներ»-ի թարգմանության գործում:

Ստորև ներկայացնենք մեր դիտարկումները և էական բացթողումներն ու թերացումները փաստարկենք բնագրային և թիրախային լեզվի համեմատական օրինակներով:

«Քաղաքավարության վնասները» նովելաշարի բնագրային և անգլերեն թարգմանված տարբերակները համեմատելիս անմիջապես աչքի է զարնում առաջին հստակ տարբերությունը՝ *թարգմանիչն ինքնություն վերնագրել է բոլոր նովելներն ու խախտել հերթականությունը*: Կարծում ենք՝ առաջինը պայմանավորված է ընթերցողի ուշադրությունը գրավելու հանգամանքով, իսկ հերթագայության խախտումը, հավանաբար, զուտ կամայական է, քանի որ անտեսվել է երգիծաբանի սրբազան կամքը: Հավելենք, որ խնդրո առարկա ստեղծագործության վերնագիրը թարգմանիչը ներկայացրել է “The Perils of Politeness” տարբերակով, մինչդեռ անգլերենում “perils” նշանակում է «վտանգ»: Փոխարենը կա “harm” բառը, որն ունի հենց «վնաս» իմաստը: Կարծում ենք՝ առավել նպատակարար էր հավատարիմ մնալ պարոնյանական վերնագրին և այն թարգմանել որպես “The Harms of Politeness”, որը լիովին փոխանցում է վնասակարության գաղափարը: Բացի այդ՝ իմաստային նրբություն կա *վտանգի* ու *վնասի* միջև. *վտանգը դեռևս վնաս չէ...*

Բնագրային և թարգմանված տեքստերի հետագա քննությունը ցույց է տալիս նաև, որ բազմաթիվ հատվածներում թարգմանիչը կարծես վերարտադրում է սեփական տեսակետը, կատարում *ինքնություն մեկնաբանություններ*, որոնք, ան-

շուշտ, խաթարում են համարժեք թարգմանության սկզբունքը. թարգմանչի կատարած ավելացումները, ինչպես նաև տեղ-տեղ նկատված բազում բացթողումները, ինչ խոսք, թույլ չեն տալիս ընթերցողին լիովին պատկերացում կազմել պարոնյանական երկի բնույթի վերաբերյալ: Այս ամենը փաստում են ստորև ներկայացվող մի քանի օրինակները.

“A TYRANT STRIDES AMONG US, WHO UNDER THE GUISE OF some noble purpose, condemns us to slavery: and he accomplishes this without breaking any laws, without even denying us our freedom of will and action” (Baronian H., 1983):

«Բռնավոր մը կա, որ գեղեցիկ անվան տակ ծածկված՝ ըզմեզ գերության կը դատապարտե նույն իսկ այն առանձնաշնորհմանց մեջ, զորս մեր կամքն կը շնորհե մեզ և որոց չհակառակիր օրենքն» (Պարոնյան Հ., 1964, հ.3):

Այսպես՝ *A TYRANT STRIDES AMONG US* նախադասության մեջ առկա է *STRIDES AMONG US* հավելումը, որի նպատակն ամենայն հավանականությամբ կատարված աշխատանքին ավելի ցայտուն գեղարվեստականություն հաղորդելն է, բայց այդպիսի խաթարվել է պարոնյական կտրուկ ու պարզ ոճը: Թարգմանչի առաջարկած տարբերակը հայերեն թարգմանվում է որպես՝ «Մի բռնավոր է հսկա քայլերով շրջում մեր մեջ», իսկ հեղինակային ձևակերպումը անգլերեն կհնչի *“There is a tyrant”* տարբերակով, որը պարզ է, առանց այլևայությունների և բնագրային խոսքի ստույգ թարգմանությունն է: Անգլերենի *“noble purpose”* բառակապակցությունը, որ թարգմանվում է որպես «ազնիվ նպատակ», հարմարեցված է Պարոնյանի *«գեղեցիկ անվան տակ»* արտահայտությանը, որը տեսանելիորեն փոխում է հեզնանքը. բնագրային տարբերակը կարող էր թարգմանվել որպես *“under a nice name”*: Նմանապես *“slavery”* բառը թարգմանաբար նշանակում է «ստրկություն» և օգտագործված է որպես *«գերության»* բառի թարգմանություն, մինչդեռ անգլերենում կա հստակ համարժեքը՝ *“captivity”*. Ինչ վերաբերում է թարգմանչի կողմից *“and he accomplishes this”* արտահայտության ավելացմանը, ապա սա լիովին տեղին է, այլապես անգլերենում անհնար կլիներ պահպանել նախադասության իմաստը: Իսկ *“without even denying us our freedom of will and action”* հավելումն արդեն կամայական է և բնագրում բացակայում է. այն հայերեն թարգմանվում է *«առանց*

զրկելու մեզ մեր ազատ կամքից ու գործելու ազատությունից»: Ընդհակառակը, բնագրային **«առանձնաշնորհմանց»** բառը, որ անգլերեն կարող է հնչել որպես *“privilege”*, ընդհանրապես անտեսված է:

Նշելի է, որ բառային անհամապատասխանությունները չափազանց շատ են, և այդ ամենը պարզապես անհնար է մանրամասն ներկայացնել: Սակայն անկարող ենք անտեսել այն փաստը, որ *թարգմանիչն անհայտ պատճառներով բաց է թողել ամբողջ պարբերություններ*. դրանք, ենթադրում ենք, դժվարություն են ներկայացրել, ուստի և պարզապես անտեսվել են: Օրինակ՝ բնագրում կարդում ենք. «Ուրիշ քնաբեր գիրք մը կ'առնե. հնար չէ քնանալ նույնիսկ եթե... *Օրվան կյանքը* կարդա » (**Պարոնյան Հ., 1964, հ.3**): Այն անգլերեն կարող է հնչել "He picks up another sleep-inducing book. It's impossible to fall asleep even if he reads... Orvan's (Day's) life".

Վաճառականի պատմությանը վերաբերող նովելում թարգմանիչն անտեսել է վերջին նախադասությունը. «Դառնանք այժմ ուրիշ տեսարանի» (**Պարոնյան Հ., 1964, հ.3**): Ակնհայտ է, որ այս նախադասությունը կապող օղակ է, իսկ վերջինիս անտեսումը բնականաբար խաթարում է հեղինակային տեքստի ամբողջականությունը: Այստեղ նշենք նաև, որ անգամ «վաճառական» բառը, որն անգլերենի *“merchant”* տարբերակն է, հանկարծ անհասկանալի պատճառով նույն նովելի մեկ այլ մասում դառնում է *“business man”*, որն ունի ավելի արդիական իմաստ և բնավ բնորոշ չէ Պարոնյանի ներկայացրած ժամանակահատվածին: Մեկ այլ նովելում, ուր պատմվում է մարդկանց միևնույն պատմությունը կրկնելու սարսափելի սովորության մասին, թարգմանիչը բաց է թողել «Մեծ և արագ քայլերով հեռացա» (**Պարոնյան Հ., 1964, հ.3**) նախադասությունը, և ընթերցողը հստակ չի զգում հեղինակի ծաղրը: Նույն նովելում քիչ հետո նկատելի է նաև բնագրի հետևյալ բացթողումը. «Իսկ երբ խոսողն ազդեցության տեր կամ հարուստ ըլլա, այն ատեն խնդիրը կը փոխվի և կ'երթա մտնել մեր *Բարոյական ախտաբանության* մասին մեջ շողորորթ անվամբ, որ պիտի երևա *Խիկարի* հաջորդ թերթերուն միույն մեջ» (**Պարոնյան Հ., 1964, հ.3**): Նման բացթողումները ևս զգալիորեն շատ են, և, բնականաբար, ընթերցողը չի զգում պարոնյանական հուժկու երգիծանքն ու նովելաշարի ամբողջականությունը:

Պարոնյանի նովելաշարի անգլերեն թարգմանություններում թարգմանիչը հաճախ *անտեսել է արևմտահայերենին բնորոշ դիմելաձևերի թարգմանությունը*, որոշ դեպքերում էլ միևնույն բառին տրվել է տարբեր թարգմանություն: Օրինակ՝ *Էֆենդի* բառը շատ տեղերում բաց է թողնված, մեկ-երկու տեղ թարգմանված է որպես “Effendi”, իսկ հետո հանկարծ հանդիպում է “Man” տարբերակը, մինչդեռ պետք է պահպանվի առաջին թարգմանությունը, քանի որ այդ դիմելաձևն ունի յուրահատուկ բնույթ: Նույնը վերաբերում է նաև «քաղաքավարություն» բառին. մի դեպքում այն թարգմանված է “politeness”, որը նկատելի է անգամ վերնագրում և ճիշտ տարբերակն է, իսկ ներսում տեղ-տեղ հայտնվում է “courtesy” համարժեք ձևը, որը շատ ավելի բարձր ոճ է և, բացի այդ, ունի ոճական տարբերություն ու չի համապատասխանում նովելաշարում ներկայացված քաղաքավարության գաղափարին: Անշուշտ, պետք է նշել, որ արևմտահայերենում ևս կան այնպիսի բառեր, որոնք անհնար է թարգմանել մեկ այլ լեզվով՝ *ջանքով, քուզում* և այլն, բայց միևնույն ժամանակ կան նաև այնպիսի դիմելաձևեր, որոնց համարժեքը հնարավոր է ներկայացնել. օրինակ՝ *աղբար* բառը, որ նշանակում է «*եղբայր*» և ավելի նպատակահարմար է թարգմանել “man” տարբերակը, որն ընդհանուր դիմելաձև է և ընդունված է անգլախոս ժողովուրդների խոսակցական լեզվում, մինչդեռ թարգմանիչի ներկայացրած “my friend” տարբերակը ավելի շուտ թարգմանվում է «*ընկերս*», որն ունի մտերմության նրբերանգ:

«Քաղաքավարության վնասները» նովելաշարի անգլերեն թարգմանության վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ որոշակի դարձվածքներ, որոնցով համեմված է հեղինակային խոսքը, կա՛մ անտեսված են, կա՛մ էլ սխալ են թարգմանված և կորցրել են իրենց բուն իմաստը: Օրինակ՝ *կայծակնահար լինել* արտահայտությունը, որ հայերենում բնականաբար նշանակում է «*ցնցվել*», անգլերեն թարգմանության մեջ դարձել է. “*Merger agha is beside himselq*”, ինչը թարգմանաբար նշանակում է «*Մերկեր աղան կորցրել էր համբերությունը/զայրացել էր*»: Մեկ այլ դեպքում «*վազ անցնել*» արտահայտությունը, որ նշանակում է «*թողնել, հրաժարվել*», թարգմանված է որպես “All right...”, ինչն արտահայտում է համաձայնություն և

սխալ է փոխանցում նովելի գաղափարական իմաստը. «*վազ անցնել*»-ը կարելի է թարգմանել որպես “leave it”: Կարծում ենք՝ հակասություններն ակնհայտ են:

Հավելենք, որ նման դեպքերը ևս բավականին շատ են ներկայացված թարգմանության մեջ: Ավելին. թարգմանիչն անգամ երբեմն *անտեսել է* հեղինակային տեքստում կիրառված *դարձվածքների թարգմանությունը*, ինչը, իհարկե, որևէ արդարացում ունենալ չի կարող: Ներկայացնենք մի քանի օրինակներ և տանք մեր սեփական թարգմանությունը: Այսպես, օրինակ, բնագրում հանդիպում ենք՝ «*հոգիս ցավեցավ*»/ “my soul pained”, «*Խոսքը մեջերնիս մնա...*»/ “Let keep it among us”, «*Տղա՞ ես, աղբար*»/ “Are you so naïve, man?”, «*Ճուրճինայի՞ պիտի ելլանք*» («*Խեղկատակությո՞ւն պիտի անենք*») / “Shall we make a fool» «*թաքլաքի մը նետել տվեք* (գլուխկոնձի թող տա)»/ “let him tumble, «*Հոշ կելտին, սեֆա կելտին*»/ “You are welcome, «*Իրենց յուրով կը տապկվին*» (սեփական աշխատանքով մի կերպ ապրել), որ կարող է թարգմանվել անգլերեն մեկ այլ, համարժեք դարձվածքով. “They make both ends meet” և այլն: Նման օրինակները ևս բազմաթիվ են, որոնք խաթարում են պարոնյանական նրբամիտ ծաղրը, չեն փոխանցում ազգային ուրույն մտածողությունը: Այս խնդրին գուգահեռ տեսանելի է նաև որոշակի դարձվածքների բառացի թարգմանություն, որն անգլախոս ընթերցողին կարող է տարօրինակ ու անհասկանալի թվալ: Օրինակ՝ «*Ոտքդ պագնեն*» արտահայտությունը թարգմանված է “Let me kiss your feet”. ակնհայտ է՝ հայերեն արտահայտությունը, որ, ինչպես քաջահայտ է, խնդրանք է արտահայտում, անգլերեն բառացի թարգմանության դեպքում վերածվում է ինչ-որ անհասկանալի «ցանկության»: Նմանատիպ օրինակ է նաև՝ «*Եկուր տե, մի՛ ճաթիր*» արտահայտությունը, որ թարգմանիչը փոխանցել է որպես “Mergur Aga is ready to explode”. այստեղ բնականաբար տեսանելի է երկակի սխալ մոտեցում: Ամենից առաջ թարգմանիչն ուղղակի խոսքը վերածել է պարզ նախադասության, հետո կատարել բառացի թարգմանություն, ինչը, ցավոք, կարող է հարուցել անգլախոս ընթերցողի զարմանքը: Եթե առաջին դարձվածքի՝ «*Ոտքդ պագնեն*»-ի դեպքում հնարավոր չէ տալ անգլերեն թարգմանությունը, և գուցե դա կարելի էր փոխարինել խնդրանք արտահայտող որևէ բառով, ապա երկրորդ՝ “Mergur Aga is ready to

explode”, մեղմ ասած, ոչ այնքան հաջողված և անհասկանալի թարգմանությունն անգլերենով կարելի էր արտահայտել “Don’t lose your temper” ձևակերպմամբ, որ հայերեն նշանակում է՝ «Համբերությունդ մի՛ կորցրու»:

Անդրադառնալով պարոնյական հեգնանքի և ծաղրի փոխանցման խնդրին՝ նշենք, որ թարգմանիչը հաճախ, ցավոք, *զանց է առել անգամ նախադասության տեսակի ստույգ թարգմանությունը*, ինչը խաթարել է սուր և նրբին երգիծանքը. Սուրբ ծննդին և Զատիկին վերաբերող նովելում Պարոնյանը մեկ նախադասությամբ պատկերում է հյուրերին նախապատվություն տալու սովորույթը: Բնագրում կարդում ենք. «*Բնականաբար ամենեն հարուստին*» (Պարոնյան Հ., 1964, հ.3): Թարգմանիչը, սակայն, այս նախադասությունը վերածել է հարցադրման և խաթարել երգիծանքը. “*Actually, the most wealthy?*” (Baronian H., 1983):

Հավելենք նաև, որ թարգմանության մեջ խախտված են անգամ դերանունների, բայերի տեսակների թարգմանությունները, որոնք չեն փոխանցում համապատասխան ծաղրը. մի դեպքում հատուկ դիմելաձևը վերածում են ընդհանուր հայտարարության, իսկ մյուս դեպքում մեղմացնում են հասարակության թելադրած պարտադրանքը: Անգլերեն թարգմանության մեջ տեղ-տեղ զանց են առնված նաև բնագրային տեքստում հանդիպող նախադասությունների կառույցները և որոշակի բառերի կրկնությունները. հայտնի է, սակայն, որ կրկնություններն ինքնանպատակ չեն, այլ կիրառվում են արտահայտված միտքը շեշտադրելու նպատակով: Հաճախ *անտեսված են նաև հեղինակային նշումները*, որոնք տրվում են փակագծում, որովհետև միտված են հրավիրելու ընթերցողի ուշադրությունը:

Նովելաշարի անգլերեն թարգմանության մեջ առկա է նաև բավական էական մեկ ուրիշ թերություն: Որոշ տեղերում, օրինակ, Նահապետ աղային վերաբերող նովելում, թարգմանիչը *երկխոսությունը, որն այնքան բնորոշ է պարոնյանական ծիծաղին, վերածել է ազատ շարադրանքի*: Թարգմանչի քմահաճ փոփոխությունն ակնհայտորեն թուլացրել է երգիծանքի ուժն ու կենդանությունը: Հավելենք, որ որոշ դեպքերում էլ երկար երկխոսությունները կամայականորեն կրճատվել են, մինչդեռ երկարության նպատակը զրույցի որոշակի ծանծաղությունն արտահայտելն է:

Բնավ չնսեմացնելով հարգելի թարգմանչի ազնիվ միտումն ու կատարած շնորհակալ աշխատանքը՝ եզրակացնենք, որ նրա թարգմանությունը թեև հիմնականում գաղափար է տալիս նովելաշարի վերաբերյալ, այնուամենայնիվ լիովին չի փոխանցում պարոնյանական բազմաշերտ երգիծանքը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հակոբ Պարոնյանի «Քաղաքավարության վնասները» նովելաշարի անգլերեն թարգմանության քննությունը պարզեց, որ բնագրից թիրախ լեզվին անցման ընթացքում նկատվել են հետևյալ թերացումները.

1. Շարքի բոլոր պատումներն անհիմն վերնագրվել են՝ խախտելով հեղինակի նախընտրած հերթականությունը և անտեսելով նրա սրբազան կամքը:

2. Թարգմանությունը բնագրից հաճախ զգալիորեն հեռացել է՝ ծնունդ տալով թարգմանչի սեփական չպատճառաբանված փոփոխություններին:

3. Նկատելի են անհարկի հավելումներ կամ անհասկանալի բացթողումներ, որոնց հետևանքով երբեմն անհետացել են ոչ միայն երգիծանքի փայլը, այլև տրամաբանական ներքին կապը մյուս պատումների հետ:

4. Առկա են շարահյուսական կառույցների քմահաճ փոփոխություններ. գործրինակ՝ բնագրի հրամայական նախադասությունները երբեմն փոխվել են հարցականների, ինչը խաթարել է որոշ դրվագների իմաստը:

5. Թիրախ լեզվում խաթարվել են արևմտահայերենի անձնական դերանունների թվային գործածությունները. հեղինակի՝ ինքն իրեն ուղղված հոգնակի միտումնավոր, ընդհանրացնող խոսքն անհասկանալիորեն վերածվել է եզակիի:

6. Թարգմանչի քմածին ցանկությամբ որոշ երկխոսություններ կրճատվել են, երբեմն ներկայացվել խախտված հերթականությամբ, տեղ-տեղ անգամ վերածվել պարզ շարադրանքի:

7. Թարգմանության մեջ կա՛մ բացակայում են արևմտահայերերին բնորոշ դիմելաձևերը, կա՛մ թարգմանվել են մասամբ:

8. Նկատելի են հայերենի դարձվածքների անհամապատասխան թարգմանություններ ու երգիծանքի զանազան միջոցների և հնարքների ցավալի անտեսումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պարոնյան Հ. (1964), Երկերի ժող. տասը հատորով, հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
2. Պարոնյան Հ. (1964), Երկերի ժող. տասը հատորով, հ. 3, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
3. **Baronian H. (1930)**, *Gentlemen Beggars. A comedy in five acts.* Transl. by Ervant D. Megerditchian. Van press, Boston.
4. **Baronian H. (1933)**, *Uncle Balthazar. A comedy in three acts.* Transl. by Ervant D. Megerditchian. Van press, Boston.
5. **Baronian H. (1983)**, *The Perils of Politeness*, Trans. by Jack Antreassian, Ashod press, New York.
6. **Chomsky N. (1965)**, *Aspects of the theory of syntax*, Cambridge Mass. MIT press.
7. **Feydit F. (1961)**, *Cahiers de littérature arménienne. N IV. La Comédie et la Satire en Arménie* BARONIAN ET ODIAN. Venise – Saint Lazare.
8. **Munday J. (2008)**, *Introducing Translation Studies: Theories and Applications*, 2nd Edition, Routledge, London, p 185.
9. **Nergaard, S. and Arduini S. (2022)**, “Translation: A New Paradigm”. *Translation. A Transdisciplinary Journal*, vol. 1, no. 01, Mar.
10. **Newmark P. (1988)**, *A Textbook of Translation*, Prentice Hall Longman ELT, New Jersey.
11. **Pym A. (2014)**, *Exploring Translation Theories*, 2nd edition, , London, p 159.

REFERENCES

1. **Paronyan H. (1964)**, *Yerkeri zhogh. tas@ hatorov /Collection of works in ten volumes/*, v. 2, Yerevan, NAS RA public.

2. **Paronyan H. (1964)**, Yerkeri zhogh. tas@ hatorov /Collection of works in ten volumes/, v. 3, Yerevan, NAS RA public.
3. **Baronian H. (1930)**, Gentlemen Beggars. A comedy in five acts. Transl. by Ervant D. Megerditchian. Van press, Boston.
4. **Baronian H. (1933)**, Uncle Balthazar. A comedy in three acts. Transl. by Ervant D. Megerditchian. Van press, Boston.
5. **Baronian H. (1983)**, The Perils of Politeness, Trans. by Jack Antreassian, Ashod press, New York.
6. **Chomsky N. (1965)**, Aspects of the theory of syntax, Cambridge Mass. MIT press.
7. **Feydit F. (1961)**, Cahiers de littérature arménienne. N IV. La Comédie et la Satire en Arménie BARONIAN ET ODIAN. Venise – Saint Lazare.
8. **Munday J. (2008)**, Introducing Translation Studies: Theories and Applications, 2nd Edition, Routledge, London, p 185.
9. **Nergaard, S. and Arduini S. (2022)**, “Translation: A New Paradigm”. Translation. A Transdisciplinary Journal, vol. 1, no. 01, Mar.
10. **Newmark P. (1988)**, A Textbook of Translation, Prentice Hall Longman ELT, New Jersey.
11. **Pym A. (2014)**, Exploring Translation Theories, 2nd edition, London, p 159.

Այկանուշ Շարուրյան

Наблюдения по поводу английского перевода серии новелл

«Изддержки вежливости» Акопа Пароняна

Заклучение

Ключевые слова и выражения: Акоп Паронян, «Изддержки вежливости», серия новелл, английский перевод, Джек Андреасян, эквивалентность, оригинал-целевые тексты, передача, сопоставительный анализ, сатира.

Некоторые шедевры творчества гениального сатирика Акопа Пароняна (1843-1891) давно переведены на разные языки, и имя писателя стало известно во многих странах. Слова похвалы были получены даже с далекого материка, что было очень

важно для великой культуры небольшого народа. Например, американский искусствовед Альберт Ланг в предисловии английского перевода пьесы «Дядя Багдасар», вышедшего в свет в Бостоне, говоря о силе и воздействии сатиры армянского писателя, в качестве обобщения отмечает: «Юмор и сатира Акопа Пароняна чрезвычайно живучи, его образы, неся естественное пространственно-временное дыхание, в то же время общечеловечны». И действительно, великие произведения искусства бессмертны, а гений, как справедливо заметил Паронян, не знает национальных и религиозных границ. Для выведения же имени гения за пределы родины прежде всего важна роль удачного перевода.

Данная статья посвящается английскому переводу серии новелл «Издержки вежливости» Акопа Пароняна, составляющей самобытную часть многообразного и разножанрового творчества писателя. При сравнении текстов, переведенных с армянского языка на русский, к сожалению, становятся очевидными многочисленные упущения, текстовые несоответствия, даже своенравная, неверная и непонятная передача. Словом, уже десятки лет мы имеем дело с не очень удачными переводами. В отличие от других произведений А. Пароняна, серьезно переведенных Ервандом Мкртчяном («Дядя Багдасар», «Высокочитимые попрошайки»), в данном случае для англоязычного читателя не обеспечивается восприятие силы сатиры и высокого искусства армянского писателя. Автор статьи предлагает собственные переводы, имея в виду не только отсутствие английских эквивалентов соответствующих отрывков оригинала, но и их непонятное игнорирование.

Haykanush Sharuryan

Observations on English Translation of Hakob Paronyan's

Series of Novelettes "Harms of Politeness"

Conclusion

Key words and expressions: *Hakob Paronyan; "Harms of Politeness"; series of novelettes; English translation; Jack Andreasyan; equivalency; source-target texts, transmission; comparative study; satire.*

Some of the masterpieces of the brilliant satirist Hakob Paronyan (1843-1891) have long been translated into different languages and made his name known in many countries. Words of high praise about him were heard even from far away continent, which is extremely important for the great culture of a small nation. Thus, for instance, while speaking about the power and influence of the Armenian writer's humor and satire, in the preface of "Uncle Balthazar" published in English in Boston, the American artist Albert Lang noted: "Hakob Paronyan's humor and satire belong to all countries and peoples". The same response was heard from Europe. "Hakob Paronyan's satire is extremely lively," stated Frederic Faydi: "his characters, naturally bearing the breath of time and place, are at the same time universal". The greatest works of art are by all means immortal, and genius, as Paronyan rightly observed, recognizes no national and religious boundaries: "A poem that is given birth by a genius is well received in England, no matter how Slavic its author is". And in order to make the name of the genius heard outside the homeland the role of a *successful* translation is first of all important. So this article is dedicated to the study of the English translation of the series of novelettes "*Harms of Politeness*" (1886-1887), that comprises the peculiar part of Paronyan's diverse and multigenre work. It was performed by *Jack (Artavazd) Andreasyan* (1920-2009).

Unfortunately, during the comparison of the texts translated from Armenian into English many omissions, textual inconsistencies, even capricious, incorrect and unclear transmissions are revealed. In short, we have been facing for decades, mildly said, a not very successful translation. Unlike Paronyan's other works- serious translations by Yervand Mkrtchyan ("Uncle Balthazar", "Honorable Beggers"), in this case, the English-speaking reader was not provided with the influential power and high quality of the Armenian writer's satire and the sense of high art. By taking into consideration not only the absence of English equivalents of the relevant parts of the original text, but also their simply incomprehensible omissions the author of the article offers her own translations.

Հայկանուշ Շարուրյան - Երևանի պետական համալսարանի թարգմանությունների և պրակտիկայի ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկնածու: Գիտական

հետաքրքրությունների շրջանակը ներառում է համաշխարհային գրականությունը, թարգմանաբանությունն ու տեսությունը, գրական կապերը և առնչությունները: Անգլո-ամերիկյան գրականությունից թարգմանել և տպագրել է գեղարվեստական բազմաթիվ գրքեր: Հրատարակել է 2 մենագրություն, ուսումնամեթոդական 2 ձեռնարկ և գիտական շուրջ 40 հոդված: E-mail: h.sharuryan@ysu.am, ORCID: 0000-0001-9410-4975

Айкануш Шарурян – доцент кафедры теории и практики перевода Ереванского государственного университета, к.ф.н., доцент. Круг научных интересов: перевод и теория перевода, литературные связи и отношения. Из англо-американской литературы перевела и опубликовала множество книг. Опубликовала две монографии, два учебно-методических пособия и около 40 статей. E-mail: h.sharuryan@ysu.am. ORCID: 0000-0001-9410-4975

Haykanush Sharuryan-Associate Professor of the Chair of Translation Studies and Practice of Yerevan State University, PhD, associate professor. Her research interests include world literature, translation studies, literary connections and relations. She has translated and published many fiction books from Anglo-American literature. She has published 2 monographs, 2 educational manuals and about 40 scientific articles. h.sharuryan@ysu.am, ORCID: 0000-0001-9410-4975

Խմբագրություն է ուղարկվել 07.01.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 12.01.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 05.06.2024թ.